Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N FS-01-03-16

ՄԻՆՉԵՎ ԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԻ ՆՊԱՍՏԸ ԿԱՆԽԻԿ ԵՂԱՆԱԿՈՎ ՎՃԱՐԵԼՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

քաղ. Երևան 15 հոկտեմբեր 2016 թ.

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին), ի դեմս Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանի, ով գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության հիման վրա, և «Հայփոստ» ՓԲ ընկերությունը, ի դեմս ընկերության գլխավոր գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Ավագյանի, ով գործում է իր կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ կատարող) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

I. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն պայմանագրում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստները՝

1) **նպաստ՝** «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 27-րդ հոդվածով սահմանված խնամքի նպաստ.

2) **ծնող՝** օրենքի 27-րդ հոդվածում նշված ծնող; որդեգրող կամ խնամակալ, ում նշանակվում և վճարվում է նպաստը:

II. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2. Սույն պայմանագրով կատարողը պարտավորվում է իր բանկային հաշվին մուտքագրված նպաստի գումարները, ըստ պատվիրատուի կողմից ներկայացված՝ սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեղեկատվության (այսուհետ՝ վճարման ցուցակ), մինչև տվյալ ամսվա 20-ը տրամադրել ծնողին կամ այլ անձի:

3. Կատարողը սույն պայմանագրի 2-րդ կետով սահմանված ծառայությունը մատուցում է ծնողի բնակության վայրի հասցեում կամ իր սպասարկման գրասենյակում:

4. Կատարողի (նրա աշխատողի) գործողությունների կամ անգործության հետևանքով պետությանը կամ այլ անձանց պատճառած նյութական վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման:

5. Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունը կատարողի կողմից մատուցված է համարվում նախորդ ամսվա ընթացքում նպաստի գումարների վճարման արդյունքների մասին սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված տեղեկատվություն պարունակող փոխադարձ հաշվարկների ակտի (այսուհետ՝ փոխադարձ հաշվարկների ակտ) հաստատման պահից:

6. Կողմերը սույն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեղեկատվությունը փոխանակում են փոխհամաձայնեցված կարգով:

III. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Կողմերն իրավունք ունեն՝

1) սույն պայմանագրով սահմանված կարգով դադարեցնելու պայմանագրի գործողությունը.

2) օրենքով սահմանված կարգով բողոքարկելու մյուս կողմի գործողությունները և (կամ) անգործությունը.

3) իրականացնելու օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն պայմանագրով նախատեսված այլ իրավունքներ:

8. Կատարողն իրավունք ունի սույն պայմանագրով սահմանված կարգով ստանալու ծառայությունների մատուցման միջնորդավճարի գումարը:

9. Պատվիրատուն իրավունք ունի՝

1) ցանկացած ժամանակ ստուգելու կատարողի մատուցած ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու կատարողի գործողություններին.

2) կատարողից պահանջելու անհապաղ վերացնել հայտնաբերված թերությունները:

10. Կատարողը պարտավոր է՝

1) տվյալ ամսվա նպաստի գումարներն իր հաշվի համարին մուտքագրվելու և վճարման ցուցակն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից սկսած՝ ապահովել ծառայության մատուցումն իր սպասարկման գրասենյակում.

2) նպաստի գումարը ծնողին տրամադրելու նպատակով ծնողի բնակության վայրի հասցե այցելել առնվազն 2 անգամ (եթե առաջին այցելության արդյունքում հնարավոր չի եղել նպաստի գումարը տրամադրել ծնողին).

3) նպաստի գումարը տրամադրել բացառապես վճարման ցուցակում ներառված անձին՝ անձը հաստատող փաստաթղթի հիման վրա.

4) նպաստի գումարի վճարումը դադարեցնելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրվանից ոչ ուշ պատվիրատուին տրամադրել նախորդ ամսվա վճարման արդյունքների մասին տեղեկատվությունը, իսկ հինգերորդ աշխատանքային օրվանից ոչ ուշ՝ փոխադարձ հաշվարկների ակտը և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել իր բանկային հաշվին փոխանցված, սակայն վճարման ցուցակում ներառված անձանց չտրամադրված նպաստի գումարները.

5) պատվիրատուի պահանջով տրամադրել անձնավորված տեղեկատվություն նպաստի գումարը վճարման ցուցակում ներառված անձին տրամադրելու մասին:

11. Պատվիրատուն պարտավոր է՝

1) տվյալ ամսվա վճարման ցուցակը կատարողին տրամադրելու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ կատարողի հաշվին փոխանցել վճարման ենթակա գումարը՝ ըստ պատվիրատուի և կատարողի փոխադարձ համաձայնությամբ սահմանված համամասնությունների.

2) փոխադարձ հաշվարկների ակտը հաստատելու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում կատարողին փոխանցել սույն պայմանագրով սահմանված ծառայությունների միջնորդավճարի գումարը:

IV. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

12. Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների համար պատվիրատուն կատարողին վճարում է ծնողին տրամադրված նպաստի գումարի մեկ տոկոսի չափով միջնորդավճար:

V. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

13. Սույն պայմանագրի կապակցությամբ վեճեր ու տարաձայնություններ առաջանալու դեպքում դրանք լուծվում են տասնհինգ օրվա ընթացքում՝ բանակցությունների միջոցով, իսկ բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

14. Վեճերի ու տարաձայնությունների վերաբերյալ բանակցությունների կամ դատական գործընթացների ժամանակահատվածում կողմերը պարտավոր են գործել սույն պայմանագրի համաձայն:

VI. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

15. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով՝ լրացուցիչ համաձայնագրեր կնքելու միջոցով, որոնք կհանդիսանան սույն պայմանագրի անբաժանելի մասը:

16. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

17. Սույն պայմանագիրը լուծվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվելու դեպքում: Պայմանագիրը լուծելու վերաբերյալ առաջարկությունը մի կողմը մյուս կողմին ներկայացնում է պայմանագրի լուծման նախատեսվող ժամկետից առնվազն երկու ամիս առաջ:

18. Սույն պայմանագիրը լուծվում է պայմանագրով ստանձնած պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու հետևանքով պատճառած վնասները լրիվ հատուցելու պայմանով:

19. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից և գործում է անորոշ ժամկետով:

VII. ԿՈՂՄԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	«Հայփոստ» ՓԲ ընկերություն
Գտնվելու վայրը՝ **ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական N 3 շենք**	Գտնվելու վայրը՝ **ՀՀ, քաղ.Երեւան, Սարյան 22**
Հեռ. **(+374 10) 56 53 83,** ֆաքս. **(+374 10) 52 08 30**	Հեռ. **(+374 10) 51 47 53, 51 77 52**
Էլ. փոստ՝ **info@mlsa.am**	Էլ. փոստ՝ **info@haypost.am**
ՀՎՀՀ՝ 02505511, ՀՀ կենտրոնական գանձապետարան գործառնական վարչություն ՀՀ՝ 900011004539	ՀՎՀՀ՝ 02507464, «Կոնվերսբանկ» ՓԲԸ ՀՀ՝ 1930003703150100
Նախարար՝	«Հայփոստ» ՓԲ ընկերության գլխավոր գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
Արտեմ Վարդանյան	**Հայկ Ավագյան**

Հավելված N 1

խնամքի նպաստը կանխիկ

եղանակով վճարելու ծառայությունների

մատուցման պայմանագրի

Ց Ա Ն Կ

ՎՃԱՐՄԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ

1. Վճարահաշվարկային կազմակերպության անվանումը

2. Ծնողի անունը, ազգանունը (հայրանունը), անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը, առկայության դեպքում՝ ծնողի փոխարեն նպաստն ստանալու՝ օրենքով այդ իրավունքն ունեցող անձի անունը, ազգանունը (հայրանունը), անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը

3. Ծնողի հաշվառման (հաշվառման) վայրի հասցեն՝ ըստ բնակչության պետական ռեգիստրի

4. Վճարման ցուցակում ներառված անձին վճարման ենթակա նպաստի գումարը (այդ թվում՝ տվյալ ամսվան նախորդող ժամանակահատվածի համար)՝ ըստ ժամանակահատվածի

5. Վճարման ենթակա ընդհանուր գումարի չափը

Հավելված N 2

խնամքի նպաստը կանխիկ

եղանակով վճարելու ծառայությունների

մատուցման պայմանագրի

Ց Ա Ն Կ

ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԱԿՏՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ

1. Ամիսը, որի ընթացքում իրականացվել են նպաստի վճարումները

2. Նպաստ ստացած անձանց թիվը

3. Վճարված նպաստի գումարը

4. Հայաստանի Հանրապետության պետական բյուջե (փոխանցված) փոխանցման ենթակա՝ իր բանկային հաշվին փոխանցված, սակայն վճարման ցուցակում ներառված անձանց չտրամադրված գումարների հանրագումարը

5. Մատուցված ծառայությունների միջնորդավճարի գումարը

6. Կողմերի վավերապայմանները, կնիքները և լիազորված անձանց անունները, ազգանուններն ու ստորագրությունները

7. Փոխադարձ հաշվարկների ակտը կնքելու օրը, ամիսը, տարեթիվը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«24» 01 2020թ. N 2/1545-20

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

Ես՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ստեփան Մաչյանս, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի, 323-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 700-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կանոնադրության 26-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներով՝ Սոցիալական ապահովության ծառայության գլխավոր քարտուղար Հարություն Գևորգյանին (անձնագրի տվյալները՝ AM0406525, տրված 04.08.2011 թվականին 012-ի կողմից) ***լիազորում եմ*** Նախարարության անունից հանդես գալու և կատարելու անհրաժեշտ փոփոխություններ Նախարարության և «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲ ընկերության միջև 2018 թվականի հունիսի 5-ին կնքված՝ «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջոցով իրականացվող պետական նպաստների վճարման ծառայությունների մատուցման» N 1 և 2016 թվականի փետրվարի 15-ին կնքված «Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը կանխիկ եղանակով վճարելու ծառայությունների մատուցման» N FS-01-03-16 պայմանագրերում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 15-ի N 1314-Ն որոշման:

Սույն լիազորագիրը տրվում է առանց վերալիազորման իրավունքի, մինչև վերոնշյալ գործողությունների ավարտը:

Ս. ՄԱՉՅԱՆ

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ. (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30
http://www.mlsa.am info@mlsa.am

23.01.2020

X

ՍՏԵՓԱՆ ՄԱՉՅԱՆ

Signed by: MACHYAN STEPAN 2314870492

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«ՀԱՅՓՈՍՏ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-ԻՆ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ք. Երևան 05 Հոկտեմբերի 2021

«Հայփոստ» ՓԲ ընկերությունը, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, գրանցված է և գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0002, Սարյան 22 հասցեում և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի նշանակված ազգային օպերատոր՝ (այսուհետ՝ նաև Կատարող) ի դեմս գլխավոր գործադիր տնօրեն Հայկ Կարապետյանի, մի կողմից, և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, (այսուհետ՝ սույն պայմանագրի իմաստով Պատվիրատու) ի դեմս Միասնական սոցիալական ծառայության պետ Էդուարդ Պետրոսյանի, մյուս կողմից, (այսուհետ՝ Կատարողը և Պատվիրատուն միասին կհիշատակվեն որպես կողմեր) կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

Կողմերը համաձայնության են գալիս Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Հայփոստ» ՓԲ ընկերության միջև 2016 թվականի փետրվարի 15-ին կնքված «Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը կանխիկ եղանակով վճարելու ծառայությունների մատուցման» պայմանագրի շրջանակներում սահմանել Կատարողի՝ ՀՀ ողջ տարածքում սպասարկման գրասենյակների կողմից սպասարկվող մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի գումարների վճարման նպատակով սահմանված տեղեկատվության փոխանակության նոր կարգ:

1. Կողմերը որոշել են Կատարողի՝ ՀՀ ողջ տարածքում սպասարկման գրասենյակների կողմից սպասարկվող մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի գումարների վճարման վերաբերյալ Պատվիրատուի և Կատարողի միջև Պայմանագրերով սահմանված տեղեկատվության փոխանակումն իրականացնել WEB սերվիսի (էլեկտրոնային ծառայության) միջոցով:

2. Յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային օրը Պատվիրատուն տվյալ ամսվա ձևավորված էլեկտրոնային ցուցակը (այսուհետ՝ վճարման ցուցակ) հասանելի է դարձնում Կատարողին և տեղեկացնում վերջինիս:

3. Յուրաքանչյուր օրվա ավարտին Կատարողը WEB սերվիսի (էլեկտրոնային ծառայության) համապատասխան տիրույթում տեղադրում է օրվա վճարումների վերաբերյալ տեղեկատվությունը:

4. Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի վճարումը դադարեցնելու օրվան հաջորդող 2-րդ աշխատանքային օրվանից ոչ ուշ Կատարողը WEB սերվիսի (էլեկտրոնային ծառայության) համապատասխան տիրույթում ապահովում է մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի գումարների վճարման արդյունքների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը՝ Պատվիրատուին ուղարկելով հաղորդագրություն՝ վճարումները ավարտելու և վճարման ցուցակները փակելու մասին: Վճարման ցուցակները փակելուց հետո վճարման ցուցակներում որևէ տվյալի փոփոխություն չի կատարվում:

5. Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին գրավոր տեղեկացնել հետագա հայտնաբերված անճշտությունների վերաբերյալ՝ ներկայացնելով հաշվարկների ակտը, համապատասխան հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշիվ վավերագիրը, որի հիման վրա Պատվիրատուի կողմից կատարվում են համապատասխան փոփոխությունները:

6. Վճարման գործընթացի իրականացման նպատակով՝ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում նաև իր կողմից ստորագրված և կնքված համապատասխան տեղեկանքներ՝ ըստ դրամական վճարների տեսակների և նշանակելու իրավասություն ունեցող համապատասխան մարմինների:

7. Վճարման գործընթացի ավարտին Կողմերը ձևավորում են փոխադարձ հաշվարկների ակտ՝ ըստ սահմանված ձևաչափի, որի, ինչպես նաև սույն համաձայնագրի 5-րդ կետում նշված փաստաթղթերի, բնօրինակները տրամադրվում են կողմերին՝ ստորագրման և կնքման նպատակով:

8. Վճարման գործընթացի ընթացքում Պատվիրատուն իրավունք ունի արգելափակել շահառուի գումարի վճարումը, (օրինակ մահվան վերաբերյալ տեղեկատվություն, գումարը ստանալու իրավունք չունենալու մասին որոշում և այլն) ինչը Կատարողի համար հիմք է վճարում չիրականացնելու: Արգելափակումը հանվում է բացառապես Պատվիրատուի կողմից:

9. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում 2021 թվականի հունիսի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

10. Սույն Համաձայնագիրը կազմված է երեք (3) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

11.Սույն համաձայնագիրը հանդիսանում է գործող Պայմանագրերի անբաժանելի մասը:

Պատվիրատու	**Կատարող**
Միասնական սոցիալական ծառայություն ք. Երևան, Նալբանդյան 13 ՀՎՀՀ 02505511 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն 900011556355 Ծառայության պետ ----------Էդուարդ Պետրոսյան	“Հայփոստ” ՓԲԸ ք. Երևան 0002, Սարյան 22 ՀՀ: 1930003703153800 “Կոնվերս բանկ” ՓԲԸ ՀՎՀՀ: 02507464 հեռ. : /010/ 514-594/, 514-512 Գլխավոր գործադիր տնօրեն ----------Հայկ Կարապետյան

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 2-2022

ՄԻՆՉԵՎ ԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԻ ՆՊԱՍՏԸ ԿԱՆԽԻԿ ԵՂԱՆԱԿՈՎ ՎՃԱՐԵԼՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի FS-01-03-16 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ք. Երևան **26 հունվարի 2022**

Միասնական սոցիալական ծառայությունը (այսուհետ՝ պատվիրատու), ի դեմս Միասնական սոցիալական ծառայության պետ Էդուարդ Պետրոսյանի, ով գործում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2021 թվականի մարտի 17-ի թիվ 37-Լ հրամանով հաստատված Միասնական սոցիալական ծառայության կանոնադրության հիման վրա, և Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատոր «Հայփոստ» ՓԲ ընկերությունը՝ ի դեմս գլխավոր գործադիր տնօրեն Հայկ Կարապետյանի, ով գործում է իր կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ կատարող), կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր), հետևյալի մասին.

Հաշվի առնելով ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 16-ի N 2048-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունները՝

Կողմերը որոշեցին Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը կանխիկ եղանակով վճարելու ծառայությունների մատուցման 2016 թվականի փետրվարի 15-ի FS-01-03-16 պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Պայմանագրի 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ «12. Սույն պայմանագրով նախատեսված՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 30-ը մատուցած ծառայությունների համար պատվիրատուն կատարողին վճարում է ծնողին տրամադրված նպաստի գումարի մեկ տոկոսի չափով միջնորդավճար:

   2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի փետրվարի 28-ը ներառյալ պատվիրատուն կատարողին սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների համար վճարում է ծնողին տրամադրված նպաստի գումարի 1.56 տոկոսի չափով միջնորդավճար:

2022 թվականի մարտի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը ներառյալ պատվիրատուն կատարողին սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների համար վճարում է ծնողին տրամադրված նպաստի գումարի 1.38 տոկոսի չափով միջնորդավճար՝ Երևան քաղաքում, 1.66 տոկոսի չափով միջնորդավճար՝ Հայաստանի Հանրապետության քաղաքային այլ բնակավայրերում, 1.56 տոկոսի չափով միջնորդավճար՝ Հայաստանի Հանրապետության գյուղական բնակավայրերում:»:

2. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

3. Սույն համաձայնագիրը կազմված է երկու (2) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Սույն համաձայնագիրը հանդիսանում է գործող Պայմանագրի անբաժանելի մասը:

Պատվիրատու	**Կատարող**
Միասնական սոցիալական ծառայություն	«Հայփոստ» ՓԲԸ
ք. Երևան, Նալբանդյան 13	ք. Երևան 0002, Սարյան 22
ՀՎՀՀ 02505511	ՀՎՀՀ: 02507464
հեռ.՝ 060 654002	հեռ. 010 514-768, 514-726
էլ.փոստ՝ info@sacservice.am	
Ծառայության պետ	Գլխավոր գործադիր տնօրեն
_____ Էդուարդ Պետրոսյան	_____ Հայկ Կարապետյան

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 3-2023

ՄԻՆՉԵՎ ԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԻ ՆՊԱՍՏԸ ԿԱՆԽԻԿ ԵՂԱՆԱԿՈՎ ՎՃԱՐԵԼՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի FS-01-03-16 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ք. Երևան [illegible] [illegible] **2023**

Միասնական սոցիալական ծառայությունը (այսուհետ՝ պատվիրատու), ի դեմս Միասնական սոցիալական ծառայության պետ Էդուարդ Պետրոսյանի, ով գործում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2021 թվականի մարտի 17-ի թիվ 37-Լ հրամանով հաստատված Միասնական սոցիալական ծառայության կանոնադրության հիման վրա, և Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատոր «Հայփոստ» ՓԲ ընկերությունը՝ ի դեմս գլխավոր գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արայիկ Աբրահամյանի, ով գործում է իր կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ կատարող), կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր), հետևյալի մասին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 670-Ն և 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-Ն որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 1918-Ն որոշման կարգավորմամբ, հիմք ընդունելով Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2023 թվականի փետրվարի 10-ի թիվ Ն/Գխ-2/1725-23 լիազորագիրը՝ Կողմերը որոշեցին «Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը կանխիկ եղանակով վճարելու ծառայությունների մատուցման» 2016 թվականի փետրվարի 15-ի FS-01-03-16 պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Պայմանագրի 12-րդ կետը լրացնել հետևյալ պարբերությամբ.

«2023 թվականի հունվարի 1-ից պատվիրատուն կատարողին սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների համար վճարում է ծնողին տրամադրված նպաստի գումարի 1.63 տոկոսի չափով միջնորդավճար:».

2. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում 2023 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

3. Սույն համաձայնագիրը կազմված է երկու (2) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Սույն համաձայնագիրը հանդիսանում է գործող Պայմանագրի անբաժանելի մասը:

5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Պատվիրատու	**Կատարող**
Միասնական սոցիալական ծառայություն	«Հայփոստ» ՓԲԸ
ք. Երևան, Նալբանդյան 13	ք. Երևան 0002, Սարյան 22
ՀՎՀՀ 02505511	ՀՎՀՀ: 02507464
հեռ.՝ 060 654002	հեռ. 010 514-768, 514-726
էլ.փոստ՝ info@sacservice.am	
Ծառայության պետ	Գլխավոր գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
_____ Էդուարդ Պետրոսյան	_____ Արայիկ Աբրահամյան